Հաստատված
Բանկի Վարչության
30/05/2022թ. թիվ 20
Արձանագրությամբ

1. **Պայմաններում կիրառվող սահմանումներ և հապավումներ**

«Էվոկաբանկ» ՓԲԸ-ն ֆիզիկական անձանց համալիր բանկային ծառայությունների մատուցումն իրականացնում է համաձայն սույն համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանների (այսուհետ՝ Պայմաններ):

Պայմաններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն ստորև ներկայացված նշանակությունը, եթե Պայմանների տեքստով կամ բովանդակությամբ ուղղակիորեն այլ բան չի նախատեսված:

- **Բանկ**- «Էվոկաբանկ» ՓԲԸ (բանկային գործունեության լիցենզիա թիվ 27, գրանցման վկայական թիվ 0157):
- **Հաճախորդ -** Բանկային ծառայություններից օգտվող կամ օգտվել ցանկացող ֆիզիկական անձ, ով ստորագրել է բանկային հաշվի բացման կամ Բանկի այլ ծառայություններից օգտվելու Բանկի կողմից սահմանված Հայտ/Հայտ-պայմանագիր/Դիմում:
- **Կողմ**-Բանկը կամ Հաճախորդը:
- **Կողմեր**-Բանկը և Հաճախորդը միասին:
- **Բանկի պաշտոնական կայք -** www.evoca.am ինտերնետային կայքը:
- **Բանկի գործունեության վայր** – Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր:
- **Ծառայության պայմաններ –** Բանկային ծառայություններից որևէ մեկի մատուցումը կարգավորող Բանկի կողմից հայտարարված առանձին պայմաններ, որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մասը, և որով սահմանվում է տվյալ ծառայության տրամադրման կարգն ու էական պայմանները: Ծառայության պայմանները Հաճախորդին հասանելի է դարձվում Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով: Այն կարող է փոփոխվել Բանկի կողմից միակողմանիորեն՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով օրենքով նախատեսված ժամկետներում և կարգով կամ Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված եղանակով:
- **Սակագներ** – Սույն Պայմանների, Ծառայության պայմանների, առանձին կնքված պայմանագրերի կամ հայտ-պայմանագրերի հիման վրա Հաճախորդին մատուցվող Բանկային ծառայությունների դիմաց սահմանված վճարների, միջնորդավճարների, դրանց գանձման ձևերի ու պայմանների, առանձին ծառայությունների համար վճարվող տոկոսների չափի, ժամկետների և այլ ֆինանսական պայմանների մասին համալիր տեղեկատվություն, որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մասը: Սակագները Հաճախորդին հասանելի են Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով: Սակագները կարող են փոփոխվել Բանկի կողմից միակողմանիորեն՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով օրենքով նախատեսված ժամկետներում և կարգով կամ Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված եղանակով: Սակագներով նախատեսված վճարները գանձվում են ՀՀ դրամով:
- **Հաշվարկային և դրամարկղային գործառնություններ**-Բանկային գործառնություններ, որոնք իրենցից ներկայացնում են Բանկի կողմից Հաճախորդների համար Բանկային հաշիվների վարում, դրանցով դրամական միջոցների կանխիկ և անկանխիկ մուտքագրումներ և ելքագրումներ:
- **Ձևաթուղթ** -Բանկի կողմից սահմանված համապատասխան ձևաչափով փաստաթուղթ, որի ստորագրմամբ կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով դրանց էլեկտրոնային տարբերակի

ներկայացմամբ Հաճախորդը հայտնում է Բանկի կողմի առաջարկվող Բանկային ծառայություններից օգտվելու մասին իր ցանկությունը: Բանկի կողմից Ձևաթղթեր կարող են սահմանվել Հայտ/Դիմումների, հայտ-պայմանագրերի, դիմումների, պայմանագրերի համար:

- **Նույնականացուցիչ (իդենտիֆիկատոր կամ լոգին)-**Հաճախորդին առնչվող տվյալներ (անուն, տառ, թվեր, դրանց համադրություն և այլն), որոնց շնորհիվ հնարավոր է Հաճախորդին տարբերակել Բանկի այլ Հաճախորդներից:
- **Նույնականացում-**Բանկի կողմից Հաճախորդի ինքնության ստուգում վերջինիս կողմից ներկայացված նույնականացուցչի հիման վրա:
- **Հավաստագրում-**Բանկին ներկայացված նույնականացուցչի պատկանելիության ստուգում, որի շնորհիվ հնարավոր է ստուգել Բանկում Հաճախորդի Բանկային հաշիվների և/կամ Ավանդների գծով գործառնությունների իրականացման և/կամ դրանց վերաբերյալ տեղեկատվության ստացման համար Հաճախորդի և/կամ վերջինիս լիազոր անձի իրավասությունը:
- **Բանկային ծառայություններ** – Պայմանների 2.10. կետով նախատեսված ծառայությունները:
- **Բանկային հաշիվ** - Բանկի կողմից Հաճախորդին առաջարկվող ընթացիկ, քարտային և առարկայազուրկ մետաղական հաշիվներ:
- **Ընթացիկ հաշիվ** - Բանկում Հաճախորդի անվամբ բացված Բանկային հաշիվ, որով իրականացվում են ընթացիկ Բանկային գործառնություններ:
- **Առարկայազուրկ մետաղական հաշիվ-**ցպահանջ հաշիվ, որը նախատեսված է անկանխիկ ոսկու հաշվառման համար, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը և չեն նշվում այլ անհատական տվյալներ:
- **Քարտային հաշիվ**- Բանկում Հաճախորդի անվամբ բացված Բանկային հաշիվ, որում հաշվառվում են Վճարային Քարտով և դրա հետ կապված բոլոր գործառնությունները:
- **Ավանդ** - համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ժամկետային ավանդներ, որոնք ընդունվում են պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո ավանդատուին վերադարձնելու պայմաններով:
- **Ավանդատու-** Հաճախորդ, ով Բանկի հետ կնքել է Ավանդի պայմանագիր:
- **Վճարային Քարտ** - «ArCa» լոկալ, «Visa» և «MasterCard» միջազգային վճարային համակարգերի վճարային քարտեր, որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և տրամադրվում են Հաճախորդին, նրա կողմից Բանկում բացված Քարտային հաշվով գործառնություններ կատարելու նպատակով:
- **Dalma GIFT քարտ կամ Քարտ -** Բանկի սեփականությունը հանդիսացող, Բանկի և «Դալմա Գարդեն Մոլ» զվարճաառեւտրային համալիրի լոգոտիպերի պատկերով մագնիսական ժապավենով ArCa համակարգի չվերալիցքավորվող անանուն քոբրենդային վճարային քարտ, որը գործում է բացառապես «Դալմա Գարդեն Մոլ» զվարճաառեւտրային համալիրի տարածքում տեղադրված POS-տերմինալներով միայն անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով:
- **Evoca Gift Card կամ Քարտ** - Բանկի սեփականությունը հանդիսացող, Բանկի լոգոյի պատկերով մագնիսական ժապավենով ArCa համակարգի չվերալիցքավորվող անանուն վճարային քարտ, որը գործում է բացառապես V-POS և POS տերմինալներով միայն անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով, որից հնարավոր չէ լիցքավորել դրամապանակներ և կատարել բուքմեյքերական վճարումներ:
- **Քարտապան**- Բանկի ֆիզիկական անձ հաճախորդ, որին տրամադրվել է Վճարային Քարտ:
- **Պահատուփ –** Բանկի առանձնացված տարածքում տեղակայված անհատական փականներով մետաղյա արկղեր (դարակներ), որոնք տեխնոլոգիապես պաշտպանված են հրդեհից, արտաքին մեխանիկական և քիմիական գործոնների ազդեցությունից, և նախատեսված են Հաճախորդի համար արժեք ներկայացնող

ցանկացած իրերի (դրամ, արժեթղթեր, թանկարժեք մետաղներ և քարեր, ոսկերչական իրեր, արվեստի գործեր, ֆոտո և տեսաժապավեններ, մագնիսական կրիչներ և այլ իրերի) պահպանման նպատակով:

- **Հեռակառավարման համակարգեր** – EvocaTouch» և «EvocaOnline» ծառայությունների մատուցման Հեռակառավարման համակարգեր, որոնց միջոցով էլեկտրոնային փաստաթղթերի և հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը Հաճախորդին մատուցում է Բանկային ծառայություններ, ինչպես նաև այն բոլոր ծրագրային ապահովումները կամ ծրագրային ապահովմամբ սարքավորումները, որոնց միջոցով առանց Բանկի աշխատակցի միջամտության Հաճախորդին կարող է մատուցվել Բանկային ծառայություններ:
- **Վճարային տերմինալ** – Բանկի սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին պատկանող Ինքնասպասարկման սարքեր, որոնց միջոցով Հաճախորդները հնարավորություն ունեն իրականացնել գործարքներ (համալրել Բանկային հաշիվը, կատարել վարկերի մարումներ և այլն):
- **Բանկի տվյալների շտեմարան** - Բանկի ծրագրային ապահովումների և սարքավորումների համալիր, որում առկա Հաճախորդի տվյալները թույլ են տալիս Բանկային գործառնությունների իրականացման ժամանակ նույնականացնել և հավաստագրել Հաճախորդին:
- **Բանկի ներքին գործարքներ** – Գործարքներ, որոնք իրականացվում են Բանկի ներսում՝ Բանկում բացված հաշիվների միջև:
- **Ինքնասպասարկման սարք**-Ավտոմատ գանձման մեքենա կամ Վճարային տերմինալ, որը նախատեսված է առանց Բանկի աշխատակցի օգնության Հաճախորդի կողմից կանխիկ դրամական միջոցների ելքագրման կամ մուտքագրման, ինչպես նաև դրամական փոխանցումներ իրականացնելու համար:
- **Հայտ/Դիմում** - Բանկի կողմից սահմանած ձևաչափով, Հաճախորդի կողմից առձեռն կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված հայտ, դիմում, հայտ-պայմանագիր դիմում-պայմանագիր և այլն, որով Հաճախորդն արտահայտում է Բանկի կողմից առաջարկվող Բանկային ծառայություններից օգտվելու վերաբերյալ իր ցանկությունը:
- **Բանկի կոնտակտային կենտրոն**-Բանկի ստորաբաժանում, որը Բանկային ծառայությունների հետ կապված Հաճախորդին տրամադրում է օպերատիվ օգնություն:
- **Հաճախորդի ստուգիչ տեղեկատվություն**-Հաճախորդի կողմից բանկային ծառայություն ստանալու Հայտում նշված տառային կամ թվային տվյալներ, որոնք գրանցվում են Բանկի տվյալների շտեմարանում և օգտագործվում են Հաճախորդի կողմից Բանկի Կոնտակտային կենտրոն դիմելիս՝ Հաճախորդի նույնականացման և հավատագրման համար:
- **Գործառնական օր/Աշխատանքային օր** – Գործառնական օրը սահմանվում է երկուշաբթիից-ուրբաթ ժամը 9:30 – 17:00, առանց ընդմիջման:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն Պայմանները հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա) և Հաճախորդի կողմից այն համարվում է ընդունված այն պահից, երբ Հաճախորդը առձեռն կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով Բանկ է ներկայացնում իր կողմից պատշաճ լրացված և վավերացված Բանկային ծառայություններից օգտվելու Հայտ/ Հայտ-պայմանագիր/Դիմում կամ կատարում է այնպիսի գործողություն, որն արտահայտում է Պայմաններն ընդունելու և Պայմաններով նախատեսված ծառայություններից օգտվելու իր կամքը և մտադրությունը:

2.2. Բանկի կողմից Հաճախորդի՝ Բանկային ծառայություններից օգտվելու համար ներկայացված Հայտի/Հայտ-պայմանագրի/Դիմումի ընդունումը (ակցեպտավորումը) նշանակում է, որ Հաճախորդի և

Բանկի միջև կնքվել է համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանագիր, որի անբաժանելի մասն են հանդիսանում սույն Պայմանները, Սակագները և Ծառայության պայմանները: Թղթային կրիչով Հայտ/Հայտ-պայմանագիր/Դիմում ներկայացնելիս դրա ակցեպտավորումը կատարվում է Հաճախորդի օրինակի վրա՝ Բանկի կողմից այն ընդունելու մասին համապատասխան նշում կատարելով, իսկ Հեռակառավարման համակարգերի միջոցով Հայտ/Հայտ-պայմանագիր/Դիմում ներկայացնելիս՝ Հաճախորդին էլեկտրոնային տարբերակով հաղորդագրություն ուղարկելով, Հաճախորդին տվյալ ծառայությունը մատուցելով կամ ալ եղանակով:

2.3. Պայմանները և դրա ակցեպտավորմամբ կնքված համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանագիրը իրավաբանորեն պարտադիր և վավեր է Հաճախորդի համար:

2.4. Հաճախորդը հայտարարում է, որ հասկացել է սույն Պայմանների, Ծառայության պայմանների և Սակագների իմաստը և, որ օժտված է Բանկային ծառայություններից օգտվելու համար ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով պահանջվող համապատասխան իրավունակությամբ, գործունակությամբ և լիազորություններով:

2.5. Սույն Պայմանները սահմանում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթները, Բանկի կողմից Հաճախորդին Բանկային ծառայությունների մատուցման կարգը, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև իրականացվող Բանկային գործառնությունների հետ կապված պայմանագրային հարաբերությունները:

2.6. Հաճախորդին մատուցվող որոշակի ծառայություններ կարող են տրամադրվել Ծառայության պայմաններով կամ առանձին կնքված պայմանագրերով, կանոններով, հայտ-պայմանագրերով, համաձայնագրերով, որոնք հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մասը:

2.7. ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, Կողմերի միջև լրացուցիչ գրավոր համաձայնությամբ Պայմաններից տարբերվող դրույթներ սահմանված լինելու դեպքում դրանք ճանաչվում են գերակա:

2.8. Եթե Հաճախորդի անունից հանդես են գալիս այլ անձինք, ապա նրանք պարտավոր են Բանկ ներկայացնել Հաճախորդի կողմից տրված և ՀՀ օրենսդրության պահանջները բավարարող լիազորագիր:

2.9. Համալիր Բանկային ծառայությունների մատուցումը իրականացվում է սույն Պայմաններին, Ծառայության պայմաններին և Սակագներին համապատասխան:

2.10. Բանկը սույն Պայմանների հիման վրա Հաճախորդի՝ առձեռն/առերես կամ Հեռակառավարման համակարգերով ներկայացված էլեկտրոնային Հայտի/Դիմումի հիման մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- Բանկային հաշիվների բացում և սպասարկում,
- Վճարային քարտերի տրամադրում, քարտային հաշիվների սպասարկում,
- Ժամկետային ավանդների ընդունում և սպասարկում,
- Չհրկիզվող անհատական Պահատուփերի տրամադրում,
- Ֆիզիկական անձանց վարկերի տրամադրում,
- Բանկային հաշվով հաշվարկային և դրամարկղային գործարքների իրականացում,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված՝ Բանկի Սակագներով նախատեսված այլ ֆինանսական գործառնությունների իրականացում:

2.11. Սույն Պայմանների շրջանակներում Հաճախորդին հնարավորություն է տրվում օգտվել Պայմաններով սահմանված ցանկացած ծառայությունից:

2.12. Հաճախորդն իրավունք չունի Բանկ ներկայացնել Բանկի կողմից սահմանված Ձևաթղթից տարբերվող կամ շեղվող դիմումներ, հայտեր:

2.13. Սույն Պայմանների շրջանակներում Հաճախորդը որպես պարտադիր պայման բացում է Բանկային հաշիվ: Հաճախորդի կողմից ներկայացված Դիմումի/Հայտ-պայմանագրի/Հայտի հիման վրա Բանկը, Բանկային հաշվի կիրառմամբ մատուցում է Բանկային ծառայություններ նաև Հեռակառավարման համակարգերի միջոցով:

2.14. Բանկի Գործունեության վայրում Բանկային ծառայություններից օգտվելիս Հաճախորդը ներկայացնում է փաստաթղթեր և/կամ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին, պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:

2.15. Բանկային ծառայությունները Բանկը մատուցում է Բանկի Գործունեության վայրում՝ Գործառնական օրվա ընթացքում և Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ առանց սահմանափակման:

2.16. Հեռակառավարման համակարգերի միջոցով Գործառնական օրվանից դուրս ներկայացված Բանկային ծառայությունների մատուցման հայտերը Բանկը կատարում է հաջորդ Գործառնական օրվա ընթացքում՝ բացառությամբ Բանկի ներքին գործարքների, որոնք մշակվում են նույն պահին, անկախ հայտի ներկայացման օրվանից և ժամից:

2.17. Գործառնական օրվանից դուրս հաճախորդի կողմից ներկայացված արտարժույթի փոխանակման հայտերի ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել 5 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը: Անհրաժեշտությունից ելնելով նշված սահմանաչափը Բանկի կողմից կարող է նվազեցվել:

2.18. Սույն Պայմանները ընդունելով՝ Հաճախորդը համաձայնվում է Բանկից փոստային կապով, էլեկտրոնային փոստով, SMS հաղորդագրության, PUSH ծանուցման և կապի այլ միջոցներով ստանալ Բանկային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն, պայմանագրեր կնքելու առաջարկներ և այլ փաստաթղթեր:

3. Բանկային հաշիվներ

3.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Բանկային հաշիվների բացման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:

3.2. Սույն Պայմանների համաձայն Հաճախորդը իրավունք ունի Բանկում բացել Բանկային հաշիվ: Հաշիվները կարող են բացվել ինչպես Բանկի Գործունեության վայրում, այնպես էլ Հեռակառավարման համակարգերի միջոցով:

3.3. Բանկային հաշիվը բացվում է տվյալ տեսակի հաշվի համար սահմանված Ծառայության պայմաններով և Սակագներով, որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով: Բանկային հաշվի բացման պայմանները և սակագները հրապարակային են և դրանք տեղակայված են Բանկի www.evoca.am պաշտոնական ինտերնետային կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Հաշիվներ» ենթաբաժնում:

3.4. Բանկի Գործունեության վայրում հաշիվների բացումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված Հաշվի բացման Հայտ-պայմանագրի հիման վրա: Հայտ-պայմանագրի հետ Հաճախորդը Բանկ է ներկայացնում նաև բոլոր այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը սահմանում է Բանկը: Փաստաթղթերի ցանկին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Հաշիվներ» ենթաբաժնում :

3.5. Բանկի Գործունեության վայրում Ընթացիկ հաշիվը բացվում է Հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերը պատշաճ կարգով ներկայացվելուց հետո 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.6. Հաճախորդի կողմից պատշաճ լրացված և ստորագրված Հայտ-պայմանագիրը և ներկայացված փաստաթղթերը ՀՀ օրենսդրությանը և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխանելու դեպքում Բանկը պարտավորվում է Հաճախորդի անունով բացել Բանկային հաշիվ:

3.7. Բանկը Հաճախորդի հանձնարարականներով և կարգադրությամբ Բանկային հաշվին մուտքագրում և հաշվից ելքագրում է դրամական միջոցները, կատարում փոխանցումներ և ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով չարգելված այլ գործառություններ:

3.8. Բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել Հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ Բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ՝ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

3.9. Հեռակառավարման համակարգերի միջոցով հաշիվների բացումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերով Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային Հայտ/Դիմում-ի հիման վրա, որի համար կիրառվում է սույն Պայմաններով սահմանված Հաճախորդի հավաստագրման և նույնականացման միջոցները:

3.10. Բանկային հաշիվները կարող են բացվել ՀՀ դրամով, արտարժույթով և անկանխիկ ոսկով: Արտարժույթների ցանկին, որով հնարավոր է բացել Բանկային հաշիվ, Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով(«Ֆիզիկական անձանց» բաժնի «Հաշիվներ» ենթաբաժնում):

3.11. Բանկային հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի թույլատրվում սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերում հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց:

3.12. Հաճախորդի կանխիկ դրամի հայտը Բանկը բավարարում է 2 (երկու) բանկային օրում: Հաճախորդին կանխիկ դրամական միջոցներ հատկացնելիս գանձվում է կանխիկացման տոկոս համաձայն Բանկի վարչության կողմից հաստատված սակագների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Դրամարկղային գործարքներ» ենթաբաժնում:

3.13. Հաճախորդի հաշիվների մնացորդների վրա հաշվարկվում են տոկոսներ համաձայն Բանկի վարչության կողմից սահմանված սակագների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Ընթացիկ հաշիվներ» ենթաբաժնում:

3.14. Բանկը Հաճախորդի հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:

3.15. Բանկային հաշվից փոխանցումներն իրականացվում են ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:

3.16. Անչափահաս անձինք կարող են բացել և վարել հաշիվներ իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: Օրենքով նախատեսված կարգով և դեպքերում տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս անձինք կարող են առանց օրինական ներկայացուցիչների համաձայնության Բանկում բացել Բանկային հաշիվներ: Հաճախորդների Բանկային հաշիվներում առկա միջոցները (բացառությամբ Առարկայազուրկ մետաղական հաշիվների), երաշխավորվում են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, համաձայն «Ֆիզիկական անձանց Բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

3.17. Բանկը երաշխավորում է հաշվի, հաշվով գործառնությունների և Հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը և նման տեղեկությունները տրամադրում է միայն Հաճախորդին և նրա լիազոր ներկայացուցչին:

3.18. Բանկը պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում է համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի դրույթների:

3.19. Բանկն իրականացնում է Բանկային հաշվի սպասարկում և Հաճախորդի կարգադրությամբ այն բոլոր Հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք ՀՀ օրենսդրությամբ արգելված չեն, հաշվի

սպասարկման ընթացքում բացակայում են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ այլ օրենսդրությամբ առկա սահմանափակումներ:

3.20. Բանկային հաշիվներին մուտքագրումներ կարող են իրականացվել Վճարային տերմինալների միջոցով: Վճարային տերմինալներով գործարքներ իրականացնելու դեպքում տվյալ վճարահաշվարկային կազմակերպության կողմից կարող են սահմանվել միջնորդավճարներ, որին Հաճախորդը կարող է ծանոթանալ տվյալ վճարային տերմինալի միջոցով՝ գործարքն իրականացնելուց առաջ կամ տվյալ Վճարային տերմինալը սպասարկող վճարահաշվարկային համակարգի ինտերնետային կայքից:

3.21. Բանկային հաշիվներով Հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի մնացորդի սահմաններում՝ հաշվի առնելով Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարները և պահպանելով չնվազող մնացորդի սահմանաչափը (Սակագներով սահմանված լինելու դեպքում): Սակագներին և միջնորդավճարներին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Ընթացիկ հաշիվներ» և «Դրամարկղային գործարքներ» ենթաբաժիններում:

3.22. Բանկը իրավունք ունի օգտագործել Հաճախորդի Բանկային հաշվում եղած դրամական միջոցները՝ երաշխավորելով այդ միջոցներն անարգել տնօրինելու Հաճախորդի իրավունքը:

3.23. Հաճախորդը պարտավոր է վճարել Բանկին նրա մատուցած ծառայությունների համար համաձայն Բանկի կողմից հաստատված ծառայությունների դիմաց վճարվող սակագների (տոկոսադրույքների, դրույքաչափերի):

3.24. Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել հստակ լրացված կարգադրություններ և իրականությանը համապատասխանող տվյալներ:

3.25. Հաճախորդը պարտավորվում է իր Բանկային հաշիվներում առկա միջոցները տնօրինել սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

3.26. Բանկը Բանկային հաշիվներից վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումը և ակցեպտավորումը իրականացնում է համաձայն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի:

3.27. Հաճախորդը տեղյակ է այն մասին, որ իր կողմից Բանկային հաշվներով կատարվող Բանկային գործառնությունների նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ:

3.28. Բանկային հաշիվներով իրականացվող գործառնությունների (հաշվարկային/դրամարկղային) դիմաց Բանկը գանձում է համապատասխան միջնորդավճարներ՝ համաձայն Սակագների:

3.29. Բանկը առնվազն երեսնօրյա պարբերականությամբ Հաճախորդին տրամադրում է Բանկային հաշվի վերաբերյալ գրավոր քաղվածք՝ Հաճախորդի հետ փոխհամաձայնեցված եղանակով (փոստային կապի միջոցով, էլեկտրոնային կապի միջոցով, Բանկի տարածքում առձեռն): Սույն կետով սահմանված քաղվածքը կարող է չտրամադրվել միայն այն դեպքում, եթե Բանկային հաշվի դեբետագրումներ և կրեդիտագրումներ չեն եղել:

3.30. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ համաձայն դիմումի փակել Բանկային հաշիվը՝ ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել Բանկային հաշիվը փակելուց, եթե Հաշվի վրա դրված են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ Հաճախորդն ունի չկատարված պարտավորություններ Բանկի հանդեպ:

3.31. Ընթացիկ հաշիվը Բանկի նախաձեռնությամբ փակվում է, եթե Հաճախորդը 6 (վեց) ամսվա, ընթացքում իր հաշիվներով գործառնություններ չի կատարել և մնացորդը զրոյական է:

3.32. Ընթացիկ հաշիվը փակվելու ժամանակ, եթե Հաճախորդի հաշվին առկա է մնացորդ, ապա այն վճարվում է Հաճախորդին, կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում:

3.33. Սույն Պայմանների ներքո Հաճախորդը իրավունք ունի Բանկում բացել Առարկայազուրկ մետաղական հաշիվ, որը հնարավորություն է տալիս Հաճախորդին վերոնշյալ հաշվով իրականացնել ոսկով անկանխիկ գործարքներ:

3.34. Առարկայազուրկ մետաղական հաշիվը հանդիսանում է ցպահանջ հաշիվ, որը նախատեսված է անկանխիկ ոսկու հաշվառման համար, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը և չեն նշվում այլ անհատական տվյալներ:

3.35. Առարկայազուրկ մետաղական հաշիվները կարող են բացվել միայն 999.9 հարգի ոսկով:

3.36. Առարկայազուրկ մետաղական հաշվում հաշվառվում են Հաճախորդին պատկանող մետաղական հաշիվները՝ արտահայտած գրամներով և/կամ տրոյական ունցիաներով: Հաշիվը բացված է համարվում՝ այն համապատասխան չափի անկանխիկ ոսկով համալրելու պահից: Ոսկու մուտքագրման նվազագույն չափը սահմանվում է մուտքագրման պահին գործող Սակագներին համապատասխան:

3.37. Առարկայազուրկ մետաղական հաշիվներով իրականացվում է միայն հետևյալ գործառնությունները.

- Առարկայազուրկ մետաղական հաշվին մուտքագրում,
- Առարկայազուրկ մետաղական հաշվի ելքագրում՝ Առարկայազուրկ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով,
- Առարկայազուրկ մետաղական հաշվի համալրում՝ Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ Բանկում առկա Առարկայազուրկ մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով,
- Առարկայազուրկ մետաղական հաշվի ելքագրում՝ Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ Բանկում առկա Առարկայազուրկ մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով,

3.38. Առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է ՀՀ դրամով՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ոսկու համար հայտարարած հաշվարկային գնով և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ կամ տրոյական ունցիաներով՝ 0.001 տրոյական ունցիա ճշտությամբ: Սույն Պայմանների իմաստով մեկ տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի:

4. Ավանդներ

4.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Ավանդների ներգրավման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:

4.2. Սույն Պայմանների համաձայն Ավանդատուն իրավունք ունի Բանկում ներդնել Ավանդ: Ավանդը ներդրվում է ինչպես Բանկի Գործունեության վայրում, այնպես էլ Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ տվյալ ավանդատեսակի համար սահմանված Սակագներով, որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Ավանդներ» ենթաբաժնում:

4.3. Բանկում Ավանդ ներդնելու նպատակով Ավանդատուն Բանկին է ներկայացնում Բանկի սահմանած ձևանմուշով Հայտ-պայմանագիր, որում նշվում է Ավանդի ներդրման պայմանները:

4.4. Հայտ-պայմանագրի հետ Ավանդատուն պարտավոր է Բանկ ներկայացնել բոլոր այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը սահմանում է Բանկը: Փաստաթղթերի ցանկին Ավանդատուն կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի«Ֆիզիկական անձանց» բաժնի «Ավանդներ» ենթաբաժնի համապատասխան ավանդատեսակի ենթաբաժնում:

4.5. Ավանդը կարող է ներդրվել ՀՀ դրամով և արտարժույթով: Արտարժույթների ցանկին, որով հնարավոր է Ավանդ ներդնել, Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի

պաշտոնական կայքի«Ֆիզիկական անձանց» բաժնի «Ավանդներ» ենթաբաժնի համապատասխան ավանդատեսակի ենթաբաժնում:

4.6. Բանկը ընդունում է Ավանդատուի դրամական միջոցները որպես Ավանդ և պարտավորվում է Հայտ-պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը և տոկոսներ վճարել դրանից:

4.7. Բանկը հաստատում է Ավանդի փաստացի ներդրումը և/կամ համալրումը Ավանդատուին առձեռն կամ էլեկտրոնային եղանակով տրամադրելով ավանդային հաշվին ավանդի գումարի մուտքագրումը հավաստող փաստաթուղթը կամ այն հասանելի դարձնելով հեռակառավարման համակարգում:

4.8. Համալրման հնարավորությամբ Ավանդի գումարը կարող է համալրվել ինչպես Ավանդատուի, այնպես էլ՝ Ավանդատուի անունով երրորդ անձանց կողմից ստացված դրամական միջոցներով: Այս դեպքում Ավանդատուն Ավանդի հայտ-պայմանագիր կնքելով լիազորում է երրորդ անձանց՝ իր անունից կատարել Ավանդի համալրումներ:

4.9. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

4.10. Ավանդները ընդունվում են ինչպես կանխիկ այնպես էլ անկանխիկ եղանակով, ընդ որում անկանխիկ եղանակով Ավանդի ընդունման դեպքում Բանկն իրավունք ունի Ավանդատուի ընթացիկ հաշվից Ավանդի գումարի չափով դրամական միջոցները դուրս գրել և փոխանցել ավանդային հաշվին:

4.11. Ավանդների դիմաց հաշվեգրվող տոկոսագումարների վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

4.12. Բանկում ներդրված Ավանդի գումարը Բանկը տնօրինում է ինքնուրույնաբար՝ ապահովելով Պայմաններով սահմանված Ավանդատուի իրավունքները: Ավանդատուն կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել Ավանդի գումարը:

4.13. Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում Բանկը պարտավոր է Ավանդատուին տրամադրել քաղվածք համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի:

4.14. Բանկը պարտավոր է 5 (հինգ)-օրյա ժամկետում Ավանդատուի պահանջով վերջինիս տրամադրել ավանդային հաշվի քաղվածք՝ քաղվածքի տրամադրման համար վճար սահմանված լինելու դեպքում գանձելով համապատասխան վճարը:

4.15. Բանկը Ավանդատուների կողմից չպահանջված կամ չստացված հաշվի քաղվածքները պահպանում է 3 (երեք) տարի:

4.16. Ավանդի ներդրման համար Բանկը Ավանդատուի համար բացում է ավանդային հաշիվ, ինչպես նաև Ավանդատուի համապատասխան հայտով՝ ՀՀ դրամով և Ավանդի արժույթով ընթացիկ հաշիվ(ներ), ընդ որում նշված ընթացիկ հաշիվների համար Բանկի կողմից հաշվի սպասարկման միջնորդավճար չի գանձվում: Ավանդի ներդրման նպատակով բացված ընթացիկ հաշիվ(ներ)ը պետք է օգտագործվի միայն տվյալ Ավանդի սպասարկման համար գործարքների կատարման նպատակով:

4.17. Ավանդատուն մինչև Պայմանագրի ժամկետի լրանալը կարող է Ավանդի երկարաձգման կամ նոր ժամկետով վերակնքման իրավունքը լիազորել երրորդ անձի՝ Բանկի համապատասխան լիազոր ներկայացուցչի ներկայությամբ և Բանկի տարածքում կազմված և ստորագրված լիազորագրի հիման վրա:

4.18. Ավանդատուն Ավանդի և հաշվեգրված տոկոսների տնօրինման իրավունքը կարող է լիազորել այլ անձի լիազորագրի հիման վրա:

4.19. Այն դեպքում, երբ Ավանդատուն Ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը և հաշվարկված տոկոսագումարները, ապա Բանկը Ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցում է Ավանդատուի Հայտ-պայմանագրում նշված ընթացիկ կամ քարտային հաշվին, եթե այլ բան սահմանված չէ Հայտ-պայմանագրով: Եթե Ավանդատուն Հայտ-պայմանագրում

Ավանդի սպասարկման համար ընթացիկ կամ քարտային հաշիվ չի նշել, ապա տոկոսները փոխանցվում են հատուկ այդ նպատակի համար նախօրոք բացված Ավանդի սպասարկման ընթացիկ հաշվին:

4.20. Բանկի կողմից Ավանդի գումարը և հաշվեգրված տոկոսագումարները ընթացիկ հաշվին փոխանցելուն հաջորդող օրվանից մինչև ստանալու պահն ընկած ժամանակահատվածի համար կշարունակվեն հաշվարկվել տոկոսագումարներ՝ Բանկի կողմից այդ ժամանակահատվածի ընթացքում ընթացիկ հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքի համար սահմանված սակագներով:

4.21. Ավանդատուն կարող է Բանկում ներդնել Ավանդ հօգուտ երրորդ անձի: Ընդ որում, երրորդ անձը կարող է լինել նաև անչափահաս անձ: Երրորդ անձը Ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը Բանկի սահմանած ձևանմուշով Բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, եթե երրորդ անձը անչափահաս է, ապա նշված պահանջը նա կարող է Բանկ ներկայացնել 18 (տասնութ) տարին լրանալուց հետո, իսկ մինչ այդ՝ նման իրավունքը վերապահված է անչափահաս անձի օրինական ներկայացուցչին (ներին): Ընդ որում ծնողներից միայն մեկի ներկայանալը բավարար է ավանդային հայտ պայմանագրով սահմանված գործողությունները կատարելու համար: Մինչև երրորդ անձի կողմից Ավանդատուի իրավունքների վրա հիմնված պահանջը Բանկ ներկայացնելը, Ավանդը տնօրինում է Ավանդը ներդնող անձը, ով ստորագրել է Հայտ-պայմանագիրը՝ համաձայն Հատ-պայմանագրով տրված հանձնարարականների և պայմանների:

4.22. Մինչև երրորդ անձի կողմից Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին արտահայտվելը Ավանդատուն կարող է օգտվել ավանդային հաշվում իր ներդրած դրամական միջոցների Ավանդատուի իրավունքներից:

4.23. Բանկը իրավունք ունի հօգուտ երրորդ անձի Ավանդ ներդրվելու դեպքում Ավանդատուից պահանջել երրորդ անձի նույնականացման համար բավարար տեղեկատվության տրամադրում: Գործարքի օրինականության վերաբերյալ կասկածների կամ երրորդ անձին նույնականացնելու անհնարինության դեպքում Բանկն իրավունք ունի հրաժարվել հօգուտ երրորդ անձանց Ավանդի պայմանագիր կնքելուց:

4.24. Ավանդատուի նախօրոք տրված կարգադրության հիման վրա Ավանդի ժամկետի լրանալու օրը Ավանդի վերադարձման պահանջ չներկայացվելու դեպքում Ավանդի գումարը կարող է երկարաձգվել տվյալ տեսակի ավանդների համար Բանկում գործող պայմաններով՝ Ավանդին գումարելով (կամ առանց գումարելու) տվյալ պահին հաշվարկված և չվճարված տոկոսները (ավանդի արժույթից տարբեր արժույթի դեպքում փոխարկելով ավանդի արժույթին այդ պահին Բանկի կողմից որոշված փոխարժեքով): Եթե ավանդի ժամկետի լրանալու օրը Բանկը նույն տեսակի Ավանդ այլևս չի առաջարկում, ապա Ավանդի ժամկետը սույն կետին համապատասխան կարող է երկարաձգվել Բանկի կողմից սահմանված այլ Ավանդի պայմաններին համապատասխան:

4.25. Բանկի կողմից Հաճախորդին վճարվող տոկոսագումարները (ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին) ենթակա են հարկման, համաձայն ՀՀ օրենսդրության, ընդ որում Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, համապատասխան եկամտային հարկի գումարները գանձում է Հաճախորդի հաշվեգրված վճարվող տոկոսագումարներից:

4.26. Բանկը պարտավոր է Ավանդատուի առաջին իսկ պահանջով վերադարձնել Ավանդի գումարը: Ավանդատուի պահանջով ժամկետից շուտ Ավանդի գումարը վերադարձվելու դեպքում Բանկը կատարում է վերահաշվարկ, Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են տվյալ պահին վերահաշվարկի համար Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքով և Ավանդի գումարից գանձվում է վճարված տոկոսագումարները, եթե Ավանդի տվյալ տեսակի համար Բանկի կողմից այլ պայմաններ նախատեսված չեն:

4.27. Բանկը պարտավոր է ապահովել Ավանդի վերաբերյալ գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.28. Ավանդի դիմաց տոկոսագումարների հաշվարկը իրականացվում է ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ այն Բանկ ներդնելու օրվանից սկսած՝ մինչև Ավանդը վերադարձնելու օրվան նախորդող օրը (ավանդադրման օր է համարվում Ավանդատուի անվամբ բացված ավանդային հաշվին դրամային միջոցների փաստացի մուտքագրման օրը): Եթե վճարման օրը հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա վճարումը կատարվում է դրան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

4.29. Ավանդի գումարի հատուցումը և հատուցման չափերը երաշխավորված են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով: Երաշխավորվող սահմանաչափերը սահմանված են սույն պայմանների TRM17-0005-09_1 հավելվածով:

4.30. Ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ավանդային հաշվով Հաշվարկային և դրամարկղային գործառնություններ չեն իրականացվում, բացառությամբ ավանդի գումարի ավելացման և նվազեցման գործառնությունների, եթե դրանք նախատեսված են տվյալ ավանդատեսակի համար:

4.31. Ավանդի դիմաց տոկոսագումարների հաշվարկը կատարվում է դրա փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով: Ներդրված ավանդի յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 հարաբերակցությամբ:

4.32. Ավանդի պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու մարմինների պահանջով Ավանդի գումարի վրա բռնագանձում տարածելու կամ այլ կերպ Ավանդի գումարն ավանդային հաշվից ելքագրելու Բանկի համար պարտադիր պահանջ ստացվելու դեպքերում:

4.33. Հեռակառավարման համակարգերով ավանդային պայմանագրի կնքումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերի միջոցով ավանդի ներդրման էլեկտրոնային հայտի ներկայացմամբ:

4.34. Հեռակառավարման համակարգերի միջոցով ավանդի ներդրման դեպքում Բանկի և Ավանդատուի միջև ավանդային պայմանագրի կնքումը հավաստվում է Ավանդատուի կողմից ավանդի ներդրման էլեկտրոնային հայտի համապատասխան մասում տվյալ ավանդատեսակի վերաբերյալ Բանկի կողմից սահմանված պայմանների ընդունման մասին Ավանդատուի կողմից համապատասխան նշում կատարելով: Ավանդների պայմաններին Ավանդատուները կարող են ծանոթանալ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Ավանդներ» ենթաբաժնում:

4.35. Ավանդի մուտքը հավաստող փաստաթուղթ է համարվում Ավանդատուի անձնական օգտագործման հեռակառավարման համակարգում գեներացված մուտքը հավաստող էլեկտրոնային փաստաթուղթը:

4.36. Այն դեպքում, երբ Ավանդատուն ներկայացրել է հայտ, որը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված ավանդատեսակների տվյալ պահին գործող պայմաններին, ապա Բանկը իրավունք ունի տվյալ հայտը մերժել:

4.37. Հեռակառավարման համակարգերի միջոցով նույն գործառնական օրվա ընթացքում ներկայացված ավանդի ներդրման հայտը Բանկի կողմից ընդունվում է ի կատարման տվյալ գործառնական օրվա ընթացքում և պայմանագիրը համարվում է կողմերի միջև կնքված տվայլ օրը: Գործառնական օրվանից դուրս ներկայացված ավանդային հայտերի պամանագրերը համարվում են կնքված հաջորդ գործառնական օրը:

4.38. Ավանդային պայմանագրի կնքման համապատասխան էլեկտրոնային հաստատումները Հաճախորդի և Բանկի կողմից իրավաբանորեն հավասարազոր են թղթային եղանակով Ավանդի պայմանագրի կնքմանը և հանդիսանում են Ավանդի պայմանագրի կնքման փաստը հաստատող փաստաթղթեր: Ընդ որում Ավանդի պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ կետի:

4.39. Հեռակառավարման համակարգերի միջոցով կնքված ավանդային պայմանագրերի և դրանց հաստատումների պահպանումը իրականացվում է էլեկտրոնային կարգով՝ Բանկի տվյալների շտեմարանում:

4.40. Հաճախորդն իրավունք ունի Բանկի Գործունեության վայրից թղթային ձևով ստանալ Հեռակառավարման համակարգերով ներդրված Ավանդային Հայտ-պայմանագրի, Ավանդի մուտքագրումը հավաստող փաստաթղթի (վճարման հանձնարարական կամ հիշարար օրդեր) իր օրինակները, ինչպես նաև ավանդային հաշիվների քաղվածքները:

5. Պահատուփերի վարձակալություն

5.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Պատահատուփերի վարձակալության կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:

5.2. Բանկում Պահատուփ վարձակալելու նպատակով Հաճախորդը Բանկին է ներկայացնում Բանկի սահմանած ձևանմուշով Հայտ-պայմանագիր, որում նշվում է վարձակալության պայմանները: Պահատուփի վարձակալության Հայտ-պայմանագիրը կարող է ներկայացվել ինչպես Բանկի Գործունեության վայրում, այնպես էլ Հեռակառավարման համակարգերի միջոցով:

5.3. Պահատուփը վարձակալությամբ տրամադրվում է Պահատուփերի վարձակալության համար սահմանված Սակագներով՝ «Սակագների և դրույքների» (TRM14-0002-02/1), որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Այլ» բաժնի «Անհատական պահատուփեր» ենթաբաժնում:

5.4. Բանկը Պահատուփերը տրամադրում է Հաճախորդներին՝ վերջիններիս համար արժեք ներկայացնող իրերի (դրամ, արժեթղթեր, թանկարժեք մետաղներ և քարեր, ոսկերչական իրեր, արվեստի գործեր, ֆոտո և տեսաժապավեններ, մագնիսական կրիչներ և այլ իրերի) պահպանման նպատակով:

5.5. Խստիվ արգելվում է Պահատուփերում պահել թունավոր, ռադիոակտիվ, պայթուցիկ նյութեր, թմրանյութեր, զենք և զինամթերք, մագնիսական դաշտի վրա ազդող առարկաներ, սննդամթերք, սերմեր, կենդանիներ, գողացված՝ ապօրինի ձեռք բերված գույք:

5.6. Բանկը պարտավորվում է ապահովել Պահատուփերի անվտանգությունը, անխաթարությունը, անձեռնամխելիությունը և գաղտնիությունը:

5.7. Հաճախորդը կարող է պահասենյակ մուտք գործել միայն Բանկի պատասխանատու աշխատակցի ուղեկցությամբ՝ ներկայացնելով Պահատուփի բանալին:

5.8. Հաճախորդը, ինչպես նաև վերջին(ներ)իս լիազորված անձը(անձինք)/ ներկայացուցիչ(ներ)ը իրավունք չունեն Պահատուփից օգտվել որևէ երրորդ անձի ուղեկցությամբ:

5.9. Հաճախորդին չի թույլատրվում Պահատուփի բանալու կրկնօրինակ պատրաստել:

5.10. Հաճախորդին չի թույլատրվում լուսանկարել կամ տեսագրել Պահատուփը կամ պահասենյակը:

5.11. Հաճախորդը կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձը Պահատուփից կարող է օգտվել Բանկի կողմից սահմանված գործառնական օրերին և ժամերին:

5.12. Հաճախորդը իր յուրքանչյուր այցելություն ժամանակ պահասենյակում կարող է գտնվել առավելագույնը 15 (տասնհինգ) րոպե:

5.13. Պահատուփերի վարձակալության դիմաց վճարվող միջնորդավճարի չափը կախված է Պահատուփի չափից և վարձակալության ժամկետից՝ համաձայն Բանկի կողմից հաստատված Սակագների: Սակագներին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Այլ» բաժնի «Անհատական պահատուփեր» ենթաբաժնում :

5.14. Պահատուփերում արժեքների պահպանումը կատարվում է առանց Բանկի կողմից նրա պարունակության ստուգման:

5.15. Պահատուփը վարձակալության կարող է տրամադրվել մեկից ավել Հաճախորդների համատեղ օգտագործման իրավունքով, հետևյալ եղանակներից մեկով՝

- Առանձին օգտվելու իրավասությամբ. Որի դեպքում Հաճախորդներից յուրաքանչյուրն առանձին, առանց մյուս Հաճախորդների գիտության և առանց որևիցե սահմանափակումների իրավունք

ունի տնօրինել Պահատուփը, ինչպես նաև ցանկացած ժամանակ իրականացնել Հայտ-պայմանագրով սահմանված պայմանների փոփոխություն և Հայտ-պայմանագրի խզում:

- Ընդհանուր համաձայնությամբ տնօրինելու իրավասությամբ. Որի դեպքում Պահատուփի տնօրինումը, ինչպես նաև Հայտ-պայմանագրով սահմանված պայմանների փոփոխությունը և Հայտ-պայմանագրի խզումը պետք է իրականացվի Հայտ-պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր Հաճախորդների կողմից համատեղ կամ մնացած Հաճախորդների գիտությամբ և համաձայնությամբ:

Համատեղ օգտագործման իրավունքով Պահատուփի Հայտ-պայմանագիրը պետք է ստորագրվի համատեղ օգտագործման իրավունք ունեցող բոլոր Հաճախորդների կողմից՝ նշելով համատեղ օգտագործման եղանակը:

5.16. Պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդի կողմից Պահատուփի բանալու կորստի, Պահատուփին պատճառված ցանկացած վնասի, ներառյալ՝ այդ պատճառով առաջացած տեխնիկական միջամտությունը), ինչպես նաև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտին բանալին չվերադարձնելու դեպքում (նշված դեպքերի փաստը հավաստվում է Հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա) Պատասխանատուն պարտավոր է գանձել Բանկի ՝ «Սակագների և դրույքների» (TRM14-0002-02/1)-ով նախատեսված համապատասխան վճարները: Տվյալ դեպքում Պատասխանատուն Հաճախորդին տեղեկացնում է, որ Պահատուփի պարունակությունը ենթակա չէ վերադարձման այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդը չի հատուցել իր կողմից պատճառած վնասները:

5.17. Հաճախորդն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել պայմանագիրը՝ վճարելով Պահատուփի օգտագործման հետևանքով առաջացած բոլոր պարտավորությունները և ներկայացնելով համապատասխան դիմում և պահատուփի բանալին: Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում գանձված սակագինը ենթակա չէ վերադարձման:

5.18. Հայտ-պայմանագրում/Պայմանագրում ուղղակիորեն նշված՝ պահատուփի պայմանների հետագա փոփոխությունների մասին Հաճախորդի հանձնարարականը ներկայացվում է Բանկի սահմանված ձևանմուշով և այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած:

5.19. Պահատուփից օգտվելու ծառայության վճարն առաջին անգամ Հաճախորդը կատարում է Հայտ-պայմանագրի/Պայմանագրի ստորագրման ժամանակ, իսկ հաջորդ վճարումները յուրաքանչյուր երկարաձգման ժամանակահատվածի սկզբում՝ կանխավճարային կարգով:

5.20. Բանկը կարող է Հաճախորդին ծանուցելով Հայտ-պայմանագրում/Պայմանագրում նշված պահատվության ծառայության ժամկետի ավարտից հետո այն երկարաձգել Հայտ-պայմանագրում/Պայմանագրում նշված նույն ժամկետով՝ համաձայն Բանկում այդ պահին գործող Սակագների: Ժամկետը ենթակա է ինքնաբերաբար երկարաձգման յուրաքանչյուր անգամ ժամկետը լրանալուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը մինչև ժամկետը լրանալը ներկայացրել է Պահատուփի ծառայությունից օգտվելու դադարեցման դիմում:

5.21. Բանկի կողմից Պահատուփերի վարձակալության Պայմանագիրը/ Հայտ-պայմանագիրը կարող է առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու միակողմանիորեն լուծվել հետևյալ դեպքերում՝

5.21.1. Եթե Հաճախորդը սահմանված ժամկետներում Պահատուփի վարձավճարը 3 ամիս շարունակ չի վճարում (Հաճախորդի բանկային հաշիվների միջոցները չի բավարարում վարձավճարը գանձելու համար) և պայմանագրի ժամկետի ավարտին Պահատուփի բանալին չի վերադարձնում Բանկին,

5.21.2. Պայմանագրով և/կամ Բանկի կողմից հրապարակված պայմաններով սահմանված այլ դեպքերում,

5.21.3. Բանկի նախաձեռնությամբ այլ դեպքերում:

5.22. Պայմանագիրը/Հայտ-պայմանագիրը լուծվում է՝ այդ մասին 15 օր առաջ ծանուցելով Հաճախորդին:

5.23. Բանկը կարող է առանց Հաճախորդի համաձայնության և ներկայության բացել Պահատուփը հետևյալ դեպքերում՝

5.23.1. Դատական վճռի առկայության դեպքում հարկադիր կատարումն ապահովող ծառայության կամ պետական այլ իրավասու մարմնի որոշմամբ:

5.23.2. Եթե Պայմանագրով/Հայտ-պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո Հաճախորդը չի ազատել Պահատուփը և բանալին չի վերադարձրել Բանկին:

5.23.3. Եթե Հաճախորդը Պահատուփի վարձավճարը 3 ամիս շարունակ չի վճարել (Հաճախորդի բանկային հաշիվների միջոցները չի բավարարում վարձավճարը գանձելու համար):

5.23.4. Եթե ի հայտ է եկել անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած դեպքեր, այդ թվում՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, վթար և այլն:

5.23.5. Բանկի կողմից առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ Պահատուփում առկա են ՀՀ օրենսդրությամբ և սույն Կարգով սահմանված արգելված իրեր:

5.23.6. Եթե Պահատուփի Պայմանագրով/Հայտ-պայմանագրով սահմանված ժամկետն ավարտվել է և Պայմանագրի ավարտի օրվանից 15 օրացույցային օրվա ընթացքում Հաճախորդը չի ազատել Պահատուփը:

5.23.7. Եթե Բանկի կողմից միակողմանիորեն լուծվում է Պահատուփի վարձակալության պայմանագիրը:

5.23.8. Պայմանագրով և/կամ Բանկի կողմից հրապարակված պայմաններով սահմանված այլ դեպքերում:

5.24. Հաճախորդի մահվան դեպքում Բանկի կամ շահագրգիռ անձի դիմումով նոտարի կողմից կարող է իրականացվել պահատուփի բացում և գույքագրում: Պահատուփի բացման գործընթացն իրականացվում է համաձայն 10.05.2022թ.-ի թիվ 06 Խորհրդի արձանագրությամբ հաստատված «Բանկում Չհրկիզվող անհատական պահատուփերի վարձակալության» կարգի (ներառյալ հետագա փոփոխությունները): Նոտարի կողմից գույքագրված դրամական միջոցները մուտք են արվում Նոտարի դեպոզիտ հաշվին, իսկ Պահատուփի իրերը տեղափոխվում են Բանկում ի պահի համար նախատեսված այլ տարածք:

5.25. Հայտ-պայմանագրով սահմանված ժամկետներում վարձակալված Պահատուփի վարձավճարը երեք ամիս շարունակ չվճարելու և պայմանագրի ժամկետի ավարտին բանալին չվերադարձնելու դեպքում, Բանկն իրեն իրավունք է վերապահում առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ ազատելով Պահատուփը, և Հաճախորդի կողմից վարձակալած չհրկիզվող Պահատուփի պարունակությունը Բանկում առնվազն 4 անդամից ստեղծված հանձնաժողովի և անվտանգության համակարգերի ներկայացուցչի (որը կփոխի փականը և բանալին) կողմից տեղափոխել Բանկում ի պահի համար նախատեսված այլ տարածք:

6. Վճարային քարտեր

6.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:

6.2. Սույն Պայմանների համաձայն Հաճախորդը իրավունք ունի պատվիրել Վճարային քարտ: Վճարային քարտերը կարող են պատվիրվել ինչպես Բանկի Գործունեության վայրում, այնպես էլ Հեռակառավարման համակարգերի միջոցով:

6.3. Վճարային քարտը տրամադրվում է տվյալ տեսակի Վճարային քարտի համար սահմանված Ծառայության պայմաններով և Սակագներով, որոնք հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մաս և որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի«Ֆիզիկական անձանց» բաժնի «Վճարային քարտեր» ենթաբաժնում և «Սակագներ» բաժնի «Վճարային քարտեր» ենթաբաժնում:

6.4. Բանկը Հաճախորդներին տրամադրում է «ArCa» լոկալ, «Visa» և «MasterCard» միջազգային վճարային համակարգերի Վճարային Քարտեր:

6.5. Քարտային հաշիվները բացվում և վարվում են ՀՀ դրամով և արտարժույթով: Արտարժույթների ցանկին, որով հնարավոր է բացել Քարտային հաշիվ Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Վճարային քարտեր» ենթաբաժնում:

6.6. Բանկի Գործունեության վայրում Վճարային քարտի պատվիրումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված Վճարային քարտի տրամադրման Հայտ-պայմանագրի հիման վրա: Հայտ-պայմանագրի հետ Հաճախորդը Բանկ է ներկայացնում նաև բոլոր այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը սահմանում է Բանկը: Փաստաթղթերի ցանկին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Վճարային քարտեր» ենթաբաժնում:

6.7. Քարտապանը պարտավոր է Վճարային քարտով կանխիկ միջոցների ստացումը և բոլոր տեսակի վճարումները իրականացնել Բանկի կողմից սահմանված վճարային սահմանաչափի սահմաններում:

6.8. Բանկն իրավունք ունի Քարտապանի կողմից ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմաններով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում դադարեցնել Վճարային քարտի սպասարկումը՝ այդ մասին 10 (տասը) օր առաջ գրավոր տեղեկացնելով Քարտապանին և պահանջել Քարտապանին վճարել բանկին վճարման ենթակա բոլոր գումարները:

6.9. Բանկն իրավունք ունի փոխել Վճարային քարտերի օգտագործման և սպասարկման պայմանները, Վճարային քարտի սպասարկման սակագները՝ այս մասին 10 (տասը) օր առաջ գրավոր տեղեկացնելով Քարտապանին:

6.10. Բանկն իրավունք ունի Քարտապանի կողմից Բանկին վճարման ենթակա գումարներն անակցեպտ կարգով գանձել քարտային հաշվից, չնվազող մնացորդի հաշվից՝ անբավարարության դեպքում Քարտապանի Բանկում բացված այլ հաշիվներից:

6.11. Քարտապանի քարտային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ համաձայն Բանկի սակագների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի «Սակագներ» բաժնի «Ընթացիկ հաշիվներ» ենթաբաժնում:

6.12. Քարտապանը պարտավոր է չգերազանցել Վճարային քարտի վճարային սահմանաչափը, իսկ գերազանցելու դեպքում պետք է անմիջապես վերականգնի այն:

6.13. Հեռակառավարման համակարգերի միջոցով Վճարային քարտի պատվիրումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերով Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային Հայտ/Դիմում-ի հիման վրա, որի համար կիրառվում է սույն Պայմաններով սահմանված Հաճախորդի հավաստագրման և նույնականացման միջոցները:

6.14. Վճարային քարտը Հաճախորդը ստանում է Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի և Հաճախորդի միջև պայմանավորված այլ եղանակով: Վճարային քարտով իրականացվող գործառնությունների արտացոլման նպատակով Քարտապանի անվամբ բացված քարտային հաշիվը Բանկի կողմից Քարտապանին տրամադրվում է էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված հեռախոսահամարին SMS հաղորդագրություն կամ էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով:

6.15. Վճարային քարտերով գործառնությունների իրականացման դեպքում Հաճախորդը պարտավոր է պահպանել սույն Պայմանների անբաժանելի մաս հանդիսացող «Վճարային քարտերի տրամադրման և օգտագործման» պայմանները, որը հասանելի է Բանկի պաշտոնական կայքի «Վճարային քարտեր» բաժնի «Քարտերի տրամադրում և սպասարկում» ենթաբաժնում և Բանկի Գործունեության վայրում:

6.16. Dalma Gift Card և Evoca Gift Card համարվում են վավերական Քարտի դիմերեսին նշված ժամկետի սահմաններում: Քարտերի լիցքավորումն իրականացվում է Բանկի վճարային տերմինալների, ինչպես նաև Telcell, EasyPay և Idram վճարային տերմինալների միջոցով, ընդ որում Բանկի վճարային տերմինալի միջոցով լիցքավորում իրականացնելիս, Բանկը լիցքավորման համար միջնորդավճար չի գանձում: Քարտերից հնարավոր չէ կատարել կանխիկացում: Քարտերի մնացորդի նկատմամբ Բանկի կողմից տոկոսագումարներ չեն վճարվում: Քարտի գործողության ժամկետի ավարտի կամ Քարտի կորստի դեպքում Քարտը վերաթողարկման ենթակա չէ: Քարտի ակտիվացման ժամանակ Հաճախորդի այլ բանկային հաշիվների վրա արգելանք լինելու դեպքում, արգելանք է դրվելու նաև ակտիվացված Dalma Gift Card կամ Evoca Gift Card հաշիվների նկատմամբ: Dalma Gift Card նվեր ստացող անձը պարտավոր է ներկայանալ «Դալմա Ինվեստ» ՍՊԸ անձը հաստատող փաստաթղթով՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքելով Վճարային քարտի պատվիրման հայտ-պայմանագիր: Evoca Gift Card նվեր ստացող անձը քարտը կարող է ակտիվացնել Evocatouch հավելվածի միջոցով կամ Բանկի մասնաճյուղ այցելելով:

7. Հեռակառավարման համակարգեր

7.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Հեռակառավարման համակարգերի կիրառման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:

7.2. Սույն Պայմանների համաձայն Հաճախորդը իրավունք ունի օգտվել Հեռակառավարման համակարգերից:

7.3. Հաճախորդին Հեռակառավարման համակարգեր տրամադրվում է Հեռակառավարման համակարգերի համար Ծառայության պայմաններով և Սակագներով, որոնք հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Հեռակառավարման համակարգեր» ենթաբաժնում և «Սակագներ» բաժնի «EvocaTouch և EvocaOnline» ենթաբաժնում:

7.4. Հաճախորդի համալիր Բանկային սպասարկումը կարող է իրականացվել Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ առանց Հաճախորդի Բանկ այցելության:

7.5. Հաճախորդը Հեռակառավարման համակարգերի միջոցով կարող է դիտել իր հաշիվների շարժը, կատարել փոխանցումներ, կատարել վճարումներ, վարկերի մարումներ, ստանալ տեղեկատվություն, ներկայացնել հայտեր, ներդնել ավանդներ և կատարել բոլոր այն գործառնությունները, որոնք հասանելի կլինեն տվյալ Հեռակառավարման համակարգերով:

7.6. Հեռակառավարման համակարգերի նկարագրին և հնարավորություններին, դրանց ակտիվացման և անվտանգության միջոցների ապահովման կարգին, ինչպես նաև օգտագործման համար գանձվող միջնորդավճարներին (համաձայն Սակագների) Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում կամ Բանկի գործունեության վայրում:

7.7. Հեռակառավարման համակարգերը տրամադրվում են Հաճախորդին՝ «Միայն դիտելու» կամ «Դիտելու և գործարքներ կատարելու» հնարավորությամբ:

7.8. Հեռակառավարման համակարգերը «Դիտելու և գործարքներ կատարելու» հնարավորությամբ կիրառելու համար Հաճախորդը Բանկ է ներկայացնում Հայտ/Դիմում:

7.9. Որպես կանոն Հեռակառավարման համակարգերից կարող են օգտվել այն Հաճախորդները, որոնք Բանկում բացել են Բանկային հաշիվ:

7.10. Հաճախորդի կողմից Հեռակառավարման համակարգերից օգտվելու համար Բանկի կողմից սահմանված ձևով Հայտ/Դիմում-ի ներկայացումը և դրա ընդունումը Բանկի կողմից նշանակում է, որ Հաճախորդը ընդունել է սույն Պայմանները և ծանոթացել է Հեռակառավարման համակարգերից օգտվելու պայմաններին և կանոններին:

7.11. Հաճախորդի կողմից Հեռակառավարման համակարգերի օգտագործման ժամանակ Բանկն իրականացնում է Հաճախորդի նույնականացում և Հավաստագրում, որի համար Բանկն իրավունք ունի Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները հավաքագրել օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներով և եղանակներով:

7.12. Հաճախորդը պատասխանատու է Հեռակառավարման համակարգերով գործանություններ իրականացնելու ժամանակ էլեկտրոնային և այլ հայտերի, փաստաթղթերի ճիշտ և լրիվ լրացման համար: Բանկն իրավունք ունի չիրականացնել ոչ լրիվ լրացված կամ թերի լրացված վավերապայմաններով Հաճախորդի ներկայացրած հայտերը և/կամ հանձնարարականները:

7.13. Հեռակառավարման համակարգերից օգտվելու համար Բանկի կողմից Հաճախորդին կարող են տրամադրվել անհրաժեշտ սարքավորումներ, ծրագրային ապահովումներ, գաղտնաբառեր, բանալիներ, որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և պետք է օգտագործվեն Բանկի կողմից սահմանված եղանակով:

7.14. Հաճախորդն ընդունում և համաձայն է, որ Հեռակառավարման համակարգեր մուտք գործելու, ինչպես նաև էլեկտրոնային հայտեր, դիմումներ և պայմանագրեր կնքելու համար իր կողմից գաղտնաբառերի կիրառումը իրավաբանորեն համարժեք է թղթային փաստաթղթերի վրա դրված ձեռագիր ստորագրությանը:

7.15. Բանկը կարող է մերժել Հեռակառավարման համակարգերով գործառության իրականացումը, եթե Հաճախորդի նույնականացման և հավաստագրման տվյալները չեն համընկնում Բանկի տվյալների շտեմարանում առկա տվյալների հետ:

7.16. Բանկն իրավունք ունի կասեցնել կամ մերժել Հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված գործարքի հայտը՝ մինչև Բանկին բավարարող լրացուցիչ Հավաստագրումներ ներկայացնելը:

7.17. Բանկը պատասխանատվություն չի կրում ինտերնետի և կապի այլ միջոցների կիրառմամբ օպերատորների կողմից իրենց մատուցած ծառայությունների դիմաց Հաճախորդից գանձված վճարների համար:

7.18. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից անփութության կամ անշրջահայացության պատճառով Հեռակառավարման համակարգերի տվյալները և գաղտնաբառերը կորցնելու, ինչպես նաև դրանք երրորդ անձանց հայտնի դարձնելու հետևանքով:

7.19. Հաճախորդը պարտավոր է անհապաղ Բանկին տեղեկացնել իրեն տրամադրված սարքերի կորստի կամ վնասվածքի և/կամ Հաճախորդի նույնականացման և հավաստագրման տվյալները երրորդ անձանց հայտնի դառնալու փաստի մասին:

7.20. Հաճախորդը պարտավոր է Հեռակառավարման համակարգերը օգտագործել բացառապես դրանց նպատակային նշանակությանը համապատասխան:

7.21. Հաճախորդը պարտավոր է պահպանել Հեռակառավարման համակարգերի ծրագրային ապահովումների հետ կապված բոլոր հեղինակային իրավունքները:

7.22. Բանկն իրավունք ունի, անվտանգության և ապահովության նկատառումներից ելնելով, Հեռակառավարման համակարգերով իրականացվող գործառնությունների համար սահմանել սահմանափակումներ և սահմաչափեր, ինչպես նաև կախված գործառնության սահմանաչափից՝ կիրառել հավելյալ նույնականացման և հավաստագրման միջոցառումներ:

7.23. Հաճախորդի ինքնության, Հեռակառավարման համակարգերի անօրինական օգտագործման, անվտանգության պահանջների խախտման, զեղծարարության վտանգի կամ բանկային գործառնության օրինականության վերաբերյալ կասկած ունենալու, ինչպես նաև Հեռակառավարման համակարգերի օգտագործման դիմաց Հաճախորդի կողմից վճարներ չիրականացնելու դեպքում, Բանկն իրավունք ունի

միակողմանիորեն կասեցնել կամ դադարեցնել Հաճախորդի հետ գործարար հարաբերությունները և/կամ Հեռակառավարման համակարգերով սպասարկումը:

7.24. Հեռակառավարման համակարգերից օգտվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է պահպանել սույն Պայմանների անբաժանելի մաս հանդիսացող EvocaTouch» և «EvocaOnline» համակարգի օգտագործման կանոնները, որը հասանելի է Բանկի պաշտոնական կայքում և Բանկի Գործունեության վայրում:

8. Կողմերի պատասխանատվությունը

8.1. Սույն Պայմանների հիման վրա Բանկը կատարում է Հաճախորդի կողմից կամ անունից պատշաճ կերպով ներկայացված գործարքների և գործառնությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականները:

8.2. Բանկը իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սույն Պայմանները, Սակագները և Ծառայության պայմանները, այդ մասին նվազագույնը 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ տեղեկացնելով Հաճախորդին, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, Հաճախորդը համարվում է տեղեկացված և պատշաճ ծանուցված՝ դրանց վերաբերյալ Բանկի պաշտոնական կայքում հայտարարություն հրապարակելու միջոցով:

8.3. Եթե Բանկի պաշտոնական կայքում Պայմանների փոփոխման վերաբերյալ հայտարարություն հրապարակելու պահից սկսած 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում Հաճախորդի կողմից Պայմաններից հրաժարվելու մասին Բանկին հայտ չի ներկայացվում, ապա նոր Պայմանները համարվում են վերջինիս կողմից ընդունված:

8.4. Բանկը պարտավորվում է ապահովել Բանկային ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած Հաճախորդի անձնական, ֆինանսական, առևտրային, Բանկային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

8.5. Մատուցած Բանկային ծառայությունների դիմաց Բանկը Հաճախորդից անակցեպտ կարգով գանձում է միջնորդավճար՝ համաձայն Բանկի Սակագների: Սակագներով նախատեսված վճարները Բանկի կողմից որպես կանոն գանձվում են այն Բանկային հաշվից, որով կատարվում է համապատասխան գործառնությունը, իսկ միջոցների անբավարարության դեպքում գանձվում է Հաճախորդի այլ Բանկային հաշիվներից: Ընդ որում, արտարժութային հաշվից գանձվելու դեպքում արտարժութային Բանկային հաշվից ելքագրման ենթակա գումարը փոխարկվում է Բանկի սահմանած փոխարժեքով:

8.6. Բանկն իրավունք ունի իր նախաձեռնությամբ հարցում կատարել ցանկացած գումարների ծագման մասին, որոնք առկա են, կամ մուտքագրված են Հաճախորդի Բանկային հաշվին և կարող է պահանջել, որպեսզի Հաճախորդը Բանկին սահմանած ժամկետում ներկայացնի բավարար կամ գրավոր ապացույցներ գումարների ծագման օրինականության վերաբերյալ:

8.7. Հաճախորդը լիազորում է Բանկին, ձեռնարկել միջոցներ ի շահ Հաճախորդի կամ ոչ էական (թվաբանական սխալների, տառասխալների, բացթողումների և այլ վրիպակների ուղղում, Բանկային ծառայությունների անվանումների խմբագրումներ, ծառայությունների վճարների նվազեցում կամ վերացում և այլն) բոլոր փոփոխություններն ուժի մեջ դնելու համար՝ առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության կամ ստորագրության:

8.8. Բանկային ծառայությունների մատուցման միջնորդավճարները Հաճախորդի Բանկային հաշվից կարող են գանձվել յուրաքանչյուր գործարքի կատարմանն առընթեր կամ ավարտից հետո:

8.9. Եթե Հաճախորդը խախտում է Պայմանների դրույթներից որևէ մեկը, Բանկն իրավունք ունի դադարեցնել Հաճախորդին մատուցվող ծառայությունները:

8.10. Եթե որևէ գործառնություն իրականացնելու համար Բանկի կողմից սահմանված է փաստաթղթերի որոշակի օրինակելի ձև, ապա Բանկն իրավունք ունի չընդունել այդ ձևին չհամապատասխանող ցանկացած փաստաթուղթ և հրաժարվել գործառնության իրականացումից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված տեղեկությունների անճշտության համար:

8.11. Բանկն իրավունք ունի պատճենահանել և/կամ իր մոտ պահել փաստաթղթերը՝ առանց Հաճախորդի ծախսերը հատուցելու պարտավորության, ինչպես նաև համապատասխան տեղեկատվական բազաների միջոցով ստուգել Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը:

8.12. Հաճախորդը պարտավորվում է 7(յոթ) օրացուցային օրվա ընթացքում Բանկին հայտնել Հայտ/Դիմում-ի մեջ ներկայացված տվյալների փոփոխության վերաբերյալ, ինչպես նաև Բանկին ներկայացնել բոլոր այն փաստաթղթերը, որոնք հաստատում են Հաճախորդի անձնական տվյալների փոփոխությունները:

8.13. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը առ այն, որ Բանկը սպասարկման որակի բարձրացման նպատակով իրավունք ունի իր գործունեության վայրում իրականացնել տեսադիտարկում, ձայնագրել, լուսանկարել կամ տեսագրել Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսային խոսակցությունները, Հաճախորդի այցելությունները և Բանկի տարածքում կատարվող գործառնությունների ընթացքը: Այդ ձայնագրությունները, լուսանկարներն ու տեսագրությունները պահվում են Բանկում և կարող են ծառայել որպես ապացույց՝ հնարավոր տարաձայնությունների լուծման համար:

8.14. Բանկն իրավունք ունի Հաճախորդի կողմից Դիմումի/Հայտի կամ Բանկ ներկայացվող այլ փաստաթղթերի մեջ նշված գրանցման, փաստացի բնակության, աշխատանքի վայրի և էլեկտրոնային փոստի հասցեներին (այդ թվում բջջային հեռախոսահամարներին) ուղարկել տեղեկատվական և գովազդային բնույթի հաղորդագրություններ՝ այդ թվում Հաճախորդի ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

8.15. ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ:

8.16. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հետ չկապված պատաճառներով փոստի, կապի միջոցների, ինտերնետի աշխատանքի խափանման, ինչպես նաև դրա հետևանքով Հախաճորդի կողմից իր հաշիվների վերաբերյալ Բանկի ծանուցումները և հաշվետվությունների ստացման ուշացման համար:

8.17. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ուշ, թերի, ոչ հստակ, չստուգված կամ սխալ ներկայացված հրահանգների կատարման հետևանքով Հաճախորդի կրած վնասների և կորուստների համար:

8.18. Բանկը ազատվում է նյութական պատասխանատվությունից, որոնք կապված են իր վերահսկողությունից դուրս տեխնիկական խափանումների (էլեկտրասնուցման և կապի միջոցների անջատում/վնասում, Բանկի տվյալների շտեմարանի և պրոցեսինգային կենտրոնի ծրագրային ապահովումների խափանում, վճարային համակարգերի տեխնիկական ընդհատումներ և այլն) և այլ իրավիճակներում Բանկի կողմից Պայմանների կամ վերջինիս շրջանակներում կնքվող այլ պայմանագրերի դրույթների չկատարման կամ կատարման անհնարինության հետ:

8.19. Հաճախորդն իրավունք չունի առանց Բանկի գրավոր համաձայնության գրավ դնել կամ այլ կերպ ծանրաբեռնել Բանկային հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները, ինչպես նաև այլ անձանց զիջել ծառայություններ ստանալու հետ կապված Բանկի նկատմամբ առկա կամ ապագայում ծագող որևէ իրավունք: Ընդ որում Բանկը Հաճախորդի Բանկային հաշվում առկա դրամական միջոցների մնացորդների, դրամական մուտքերի և հաշվեգրվելիք տոկոսագումարների նկատմամբ ունի գրավի իրավունք՝ ի ապահովումն Բանկի կողմից Հաճախորդի համալիր բանկային ծառայությունների

մատուցման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով Բանկի նկատմամբ առաջացած պարտավորությունների կատարման:

8.20. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի հանդեպ պարտավորությունների առկայության կամ առաջացման, Հաճախորդի օգտին սխալմամբ կատարված փոխանցումների կամ Հաճախորդից սխալմամբ չգանձված այլ գումարների, ինչպես նաև հարկային պարտավորությունների առաջացման դեպքում Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով կատարել այդ պարտավորությունների և Հաճախորդի Բանկային հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցների հաշվանց:

8.21. Հաճախորդը տեղյակ է և համաձայն, որ իրավասու ատյանների կողմից սանկցիաների, սահմանափակումների, մասնակի պատժամիջոցների հրապարակման և կիրառման դեպքում Բանկը գործարքների /փոխանցվող/ստացվող գումարների/ սառեցման, կասեցման, հետ չվերադարձի հետ կապված պատասխանատվություն չի կրում, գործարքի ռիսկը կրում է Հաճախորդը: Հաճախորդը տեղյակ է և համաձայն, որ եթե գործարքի կատարման պահին դեռևս սանկցիա, սահմանափակում, մասնակի պատժամիջոց պաշտոնական հրապարակված չի եղել, սակայն ժամային գոտիների արդյունքում այն կիրառվել է և փոխանցված գումարը սառեցվել կամ կասեցվել է թղթակից բանկերի, կոնտրագենտերի, շահառու բանկերի կողմից, ապա Բանկը նույնպես գործարքի /փոխանցվող/ստացվող գումարների/ սառեցման, կասեցման, հետ չվերադարձի հետ կապված պատասխանատվություն չի կրում:

8.22. Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով հաճախորդի հաշվից դուրս գրել դրամական միջոցներ, եթե դա պայմանավորված է ՀՀ օրենսդրության կամ ՀՀ օրենսդրության պահանջների կիրառման հետ:

8.23. Բանկի հանդեպ ժամանակին չմարված պարտավորությունների առկայության դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի Բանկային հաշվի վրա կիրառել արգելանքներ:

8.24. Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ Հաճախորդի հաշիվների, քարտերի վերաբերյալ տվալները (ներառյալ հաշվի անվանում, գաղտնաբառեր և այլ) հայտնի են դարձել երրորդ անձանց Հաճախորդի կողմից դրանց օգտագործման ընթացքում պատահաբար կամ միտումնավոր գաղտնալսման, ներխուժման կամ հափշտակման միջոցով:

8.25. Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքում, երբ Հաճախորդի իսկության ստուգման տվյալները և գաղտնաբառերը հայտնի են դառնում այլ անձանց Հաճախորդի կողմից այդ տվյալների պահպանման և օգտագործման պայմանների խախտման հետևանքով:

8.26. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հանձնարարականների կատարման հետևանքով Հաճախորդի կրած վնասների և կորուստների համար, եթե դրանք առաջացել են միջնորդ կազմակերպությունների գործողությունների կամ անգործության պատճառով:

8.27. Բանկը պատասխանատվություն չի կրում ոչ լիազոր անձանց կողմից ներկայացված հանձնարարականների կատարման համար այն դեպքերում, երբ Բանկային կանոններով և Պայմաններ սահմանված գործընթացներով Բանկը հնարավորություն չի ունեցել պարզելու չլիազորված անձանց կողմից հանձնարարականներ տալու փաստը:

8.28. Բանկը պատասխանատվություն չի կրում Պայմաններով իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար այն դեպքում, երբ այդպիսի պարտավորությունների կատարումը դառնում է դժվար կամ անհնարին կամ էլ ձգձգվում է ֆորս մաժորային հանգամանքների և գործոնների ի հայտ գալով, որոնք առանց սահմանափակումների ներառում են Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ Կենտրոնական Բանկի կամ այլ պետությունների կենտրոնական Բանկերի կողմից որևէ օրենսդրական կամ այլ նորմատիվ ակտի ընդունումը, հրապարակումը կամ մեկնաբանության փոփոխությունը (այդ թվում արտարժույթի փոխարկման և փոխանցման սահմանափակումները), որոնց արդյունքում Բանկի կողմից իր պարտավորությունների կատարումը կարող է դառնալ անօրինական կամ ոչ իրավաչափ: Ֆորս մաժորային գործոնների թվին են դասվում նաև ահաբեկչական գործողությունները, դիվերսիաները,

հրդեհները, ջրհեղեղները, պայթյունները, տարրերային աղետները, քաղաքացիական անկարգությունները, ցույցերը, փողոցային երթերը, ընդվզումները, անկարգությունները, պատերազմները, պետության գործողությունները (ռազմական դրության հայտարարում և այլն) և ցանկացած այլ իրավիճակներ, որոնք դուրս են Բանկի խելամիտ վերահսկողությունից: Կողմերի միջև գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում, անհաղթահարելի ուժով պայմանավորված հանգամանք առաջանալու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել Պայմաններով նախատեսված իր պարտավորությունների կատարումը մինչև նշված հանգամանքի վերանալը:

8.29. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմանների դրույթների խախտման հետևանքով վերջինիս կողմից կրած վնասների համար:

8.30. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի սպասարկման ընթացքում ՀՀ օրենսդրական և այլ իրավական, ինչպես նաև դատական ակտերի պահանջների կատարման հետևանքով երրորդ անձանց կրած ուղղակի կամ անուղղակի վնասների համար:

8.31. Հաճախորդը պատասխանատվություն է կրում սույն Պայմանների, ինչպես նաև օրենսդրական և նորմատիվ ակտերի խախտման հետևանքով Բանկին պատճառված վնասի համար:

8.32. Հաճախորդը պարտավոր է Բանկային ծառայություններից օգտվել սույն Պայմանների, Ծառայության պայմանների և կանոնների դրույթներին համապատասխան, որոնք հասանելի են Բանկի պաշտոնական կայքում և Բանկի Գործունեության վայրում:

8.33. Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել հստակ հանձնարարականներ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ձևի և պարտադիր պայմանների և իրականությանը համապատասխանող փաստաթղթեր և տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:

8.34. Բանկային գործառնությունների կատարման, և Բանկի հետ պատշաճ կապ հաստատելու նպատակով Հաճախորդը պարտավոր է Բանկին տրամադրել բոլոր անհրաժեշտ տվյալները, տեղեկությունները և փաստաթղթերը:

8.35. Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են Հաճախորդի պատշաճ նույնականացման և Հաճախորդի հետ կապ հաստատելու համար: Հաճախորդը պարտավոր է նաև Բանկի կողմից սահմանված ձևով, անհրաժեշտության դեպքում դրանց վավերացմամբ/հաստատմամբ կամ պատշաճ թարգմանությամբ, Բանկին տրամադրել այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք ժամանակ առ ժամանակ պահանջվում են կամ կարող են պահանջվել Բանկի կողմից, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Բանկին այդ տեղեկությունների, փաստաթղթերի կամ դրանցում առկա տվյալների բոլոր փոփոխությունների մասին:

8.36. Հաճախորդը պարտավոր է Բանկի պահանջով թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը հայերեն լեզվով, ինչպես նաև՝ սահմանված կարգով վավերացնել դրանք:

8.37. Բանկն իրավունք ունի Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում դրանց իսկությունը պարզելու նպատակով իրականացնել լրացուցիչ միջոցառումներ, և Հաճախորդը սույնով համաձայնվում է, որ այս կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով իր կրած վնասների և կորուստների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

8.38. Հաճախորդը հայտարարում է, որ իր կողմից Բանկին տրամադրված հասցեները, էլեկտրոնային փոստը, հեռախոսահամարը և կապի այլ միջոցները վերահսկվում են իր կողմից և դրանցով հնարավոր է կապ հաստատել իր հետ:

8.39. Արտարժույթով վարկային և ավանդային գործարքների դեպքում, Հաճախորդը գիտակցում և ընդունում է արտարժույթի փոխարժեքի փոփոխումից բխող հնարավոր անբարենպաստ հետևանքները և կրում է դրանց հետ կապված ռիսկերը:

8.40. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդի նախնական համաձայնության սույն Պայմաններից բխող իր իրավունքները զիջել երրորդ անձանց:

8.41. Սույն Պայմանների կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.42. Հաճախորդը հնարավորություն ունի սույն Պայմաններից բխող իր բողոքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Բանկը ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքել է համաձայնագիր, որով հրաժարվել է 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գույքային պահանջներով և 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գործարքներով ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացած որոշումները վիճարկելու իրավունքից:

8.43. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բանկին՝ ստանալու իր անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվություն: Հաճախորդը տեղյակ է և համաձայն, որ Բանկը կարող է այդ տվյալները մշակել, հաշվառել, տրամադրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձանց և օգտագործել և դա չի դիտարկվի «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի կամ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտում: Տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկը, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվությունից, իր կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին և/կամ բջջային հեռախոսահամարին՝ էլեկտրոնային նամակի և/կամ SMS հաղորդագրության միջոցով տրամադրի ցանկացած տեղեկատվություն իր վարկի, ինչպես նաև Բանկի կողմից առաջարկվող պրոդուկտների և ծառայությունների կամ հնարավոր ծանուցումների վերաբերյալ:

8.44. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին՝ Հաճախորդի ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ ստանալու համար, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել Հաճախորդի հետ վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

8.45. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը նաև, որպեսզի Բանկի կողմից վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու դեպքում տվյալ վարկային (փոխառության և այլն) պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահին առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի Հաճախորդի ապագա ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ: Հաճախորդը գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

8.46. Բանկի կողմից Հաճախորդի համալիր բանկային ծառայությունների մատուցման կասեցման համար հիմք են հանդիսանում հաճախորդի մահվան, անգործունակության, սնանկության վերաբերյալ Բանկին պատշաճ ծանուցելը:

8.47. Բանկը պատասխանատու չէ Հաճախորդի մահվան, անգործունակության և սնանկության վերաբերյալ բավարար տեղեկություններ չունենալու պարագայում հաշվով կատարված գործառնությունների և դրանցից բխող հնարավոր բացասական հետևանքների համար:

8.48. Բանկի կողմից սույն Պայմաններով սահմանված իր իրավունքները չիրականացնելը չի կարող մեկնաբանվել որպես այդ իրավունքներից հրաժարում:

8.49. Հաճախորդի հանդեպ Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է միայն փաստաթղթորեն հիմնավորված իրական վնասով, որը արդյունք է Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության:

8.50. Սույնով կողմերը պայմանավորում են, որ Բանկի կողմից փոստի կամ ցրիչի միջոցով Հաճախորդի վերջին հայտնի հասցեին ուղարկվող ցանկացած ծանուցում կամ նամակ համարվում է Հաճախորդի կողմից պատշաճ ստացված դրա ուղարկման պահից սկսած 7(յոթերորդ)-րդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ Հաճախորդը դրանք փաստացի չի ստացել:

8.51. Սույնով կողմերը պայմանավորում են, որ Բանկի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով Հաճախորդի վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող ցանկացած ծանուցում կամ նամակ համարվում է Հաճախորդի կողմից պատշաճ ստացված դրա ուղարկման պահից սկսած 7(յոթերորդ)-րդ օրը կամ նշված ժամկետում նամակի ստացման վերաբերյալ համապատասխան հավաստում ստանալու օրը:

8.52. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի հանդեպ իր ունեցած պարտավորությունների մարման նպատակով երրորդ անձինք կարող են Բանկին կատարել վճարումներ: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի պարտավորությունների մարմանն ուղղված երրորդ անձանց վճարումների արդյունքում Հաճախորդի և/կամ երրորդ անձանց կրած վնասների և կորուստների համար:

8.53. Սույն Պայմանները կազմված են և մեկնաբանվում են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Սույն Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**16 միլիոն ՀՀ դրամ**(երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	**7 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)